ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

8 փետրվար, 2019 թվականի № 6-Ա

«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ ԱՐԹՈՒՐ ՂԱՆԴԻԼՅԱՆԻՆ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իրականացնելով «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») բաժնետերերի ընդհանուր ժողովի լիազորությունները, ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի N 55-Ա որոշման 1-ին կետի դրույթները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության գործադիր տնօրեն Արթուր Ղանդիլյանին 2019 թվականի ապրիլի 9-ից ազատել զբաղեցրած պաշտոնից Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերության գործադիր տնօրեն Արթուր Ղանդիլյանին սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՋԱՂԻՆՅԱՆ

8 փետրվար, 2019 թվականի

ք. Երևան